ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<<27>> 03 2018թ. ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____ հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ

ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ թատերական գործիչներ և թատերարվեստի երկրպագուներ, ի սրտե շնորհավորում եմ Ձեզ թատրոնի միջազգային օրվա կապակցությամբ:

Հայկական թատրոնը ավելի քան 2000 տարվա պատմություն ունի, հունական և հռոմեական թատրոնների հետ միասին այն ամենահին թատրոնների շարքին է դասվում: Դարերի ընթացքում հայկական թատրոնն իր առանձնահատուկ տեղն է գրավել հայ ժողովրդի հոգևոր-մշակութային և հասարակական կյանքում:

Լինելով հանրապետության հնագույն թատերական օջախներից մեկը՝ Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնը մեծ ներդրում է ունեցել ինչպես հայ թատրոնի բազմադարյա պատմության մեջ, այնպես էլ հայ ժողովրդի հոգևոր-մշակութային կյանքում: Աճեմյանականները մեր մշակույթի գանձարանն հարստացրել են գեղարվեստական մնայուն արժեքներով, դաստիարակել արվեստասերների բազում սերունդներ: Պահպանելով թատրոնի լավագույն ավանդույթները՝ առաքելությունը մանուկ հանդիսատեսի հանդեպ պատվով է կատարում նաև Ս. Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոնի ստեղծագործական խումբը՝ նրանց հոգում սերմանելով բարին ու գեղեցիկը:

Թատրոնի՛ նվիրյալներ, շնորհավորելով բոլորիդ մասնագիտական տոնի առթիվ, ցանկանում եմ քաջառողջություն, ընտանեկան երջանկություն, ստեղծագործական բազում հաջողություններ, բարձրարվեստ ներկայացումներ և թատերասեր հասարակությամբ լեցուն դահլիճներ:

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ